10.57192/18291864-2023.4-272

ՔՐԻՍՏԱՓՈՐ ՄԻՔԱՅԵԼՅԱՆԸ ԵՎ ՀՅԴ ԲԱՔՎԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆԸ

Ցարական Ռուսաստանի Ոստիկանության դեպարտամենտի 1890-ական թվականների գաղտնընթերցումներում*

Բանալի բառեր – Քրիստափոր Միքայելյան, ՀՅԴ Բաքվի կամ «Ոսկանապատի» կազմակերպություն, Ոստիկանության դեպարտամենտ, գաղտնընթերցումներ, Ներսես Դավթյան (Հրաշալի), Միքայել Զալյան (բժիշկ Զալիև), Լևոն Թադևոսյան (Պապաշա), Ստեփան Տեր-Մկրտչյան (Գագիկ):

Օսմանյան կայսրությունում 1895 թ. աշնանը մոլեգնող հայերի զանգվածային կոտորածներին զուգահեռ՝ ցարական իշխանություններն Անդրկովկասում սկսեցին հայ ազգային-ազատագրական շարժման գործիչների հալածանքներն ու ձերբակալությունները:

Ռուսաստանի Ոստիկանության դեպարտամենտը հսկայածավալ աշխատանքներ իրականացրեց իր հարավային սահմանների մոտ ծավալվող հայ ազատամարտի ֆինանսավորման ու զինման գործընթացը կասեցնելու ուղղությամբ՝ աստիճանաբար կենտրոնանալով ՀՅԴ Բաքվի կամ «Ոսկանապատի» կազմակերպության ու Թիֆլիսից նրա գործունեությունն ուղղորդող **Քրիստափոր Միքայելյանի** անձի վրա: Սկսվեցին կասկածի տակ հայտնված գործիչների նամակագրության ծածուկ ուսումնասիրությունը և տարբեր եղանակներով հայթայթված նյութերի թարգմանությունը ռուսերեն: Հասկանալի է, որ **գաղտնընթերցումների** ենթարկված ծավալուն նյութերում ՀՅԴ Բաքվի կամ «Ոսկանապատի» կազմակերպությանը վերաբերող փաստաթղթերի առատությունը պայմանավորված էր հայ ազատամարտի ֆինանսավոր-

* Ընդունվել է տպագրության 12.12.2023:

ման ու զինման գործում նրա ունեցած առաջատար դերակատարությամբ:

Սկիզբ առած հետապնդումների ու ձերբակալությունների պայմաններում ՀՅ Դաշնակցությունն ու նրա առաջնորդը ցուցաբերեցին ընդհատակյա պայքարի մեծ հմտություն և կարողացան իրենց աշխատանքները քողարկել զանազան բարեգործական ու մարդասիրական ձեռնարկների անվամբ: Դրան նպաստում էր այն իրողությունը, որ 1895 թ. սեպտեմբերի 18-ի (30-ի) Բաբը Ալիի ցույցից հետո Օսմանյան կայսրությունում սկսված զանգվածային կոտորածները լուրջ տագնապ և հուզումներ էին առաջ բերել Անդրկովկասում, ուստի արևելահայ հասարակության տարբեր խավերը դիմում էին գործուն քայլերի՝ իրենց տառապող հայրենակիցներին աջակցելու համար: Դա արտահայտվում էր Արևմտյան Հայաստան զենքի ու զինատար խմբերի տեղափոխման և դրամական միջոցների հանգանակության տեսքով:

ՀՅԴ-ն առանձնակի կարևորություն էր տալիս 1890-ականներից բուռն տնտեսական վերելք ապրող Բաքվի նավթային շրջանում հաստատված իր գործիչների կազմակերպած դրամահավաքներին: Այդ գործիչները հիմնականում Պետերբուրգում սովորած այն երիտասարդներն էին, որոնք ՀՅԴ հիմնադիր ժողովների շրջանում համախմբվել էին Թիֆլիսի «Սևերնիե նոմերա» հյուրանոցում՝ իր ծայրահեղ ազգայնական տրամադրություններն աջակողմյան հայացքների հետ զուգորդող **Կոստանդին Խատիսյանի** շուրջը: ՀՅԴ առաջին ընդհանուր ժողովից հետո նրանց մի մասն իր առաջնորդի հետ հրաժարվեց ակտիվ քաղաքական գործունեությունից, իսկ մյուսները, հաստատվելով Բաքվում, դարձան հայ ազատամարտի ֆինանսավորման ու զինման գործի ակտիվ մասնակիցները: Դրանից հետո Քրիստափոր Միքայելյանի ջանքերով ՀՅԴ Բաքվի («Ոսկանապատի») կազմակերպության մեջ սկսեց ուժեղանալ դեռևս «Հայրենասերների միությունից» հայտնի՝ ձախակողմյան հայացքներ ունեցող երիտասարդների շրջանակը, որոնք համախմբվել էին **Ներսես Դավթյանի** (**Հրաշալի**) և ապա այդ նույն կազմակերպության մեկ այլ գործուն անդամի՝ **Միքայել Զալյանի** (**բժիշկ Զալիև**) շուրջը: Վերջիններիս հետ ակտիվորեն համագործակցում էին Անդրկասպյան երկրամասում (Միջին Ասիա) ՀՅԴ առաջին խմբերը ձևավորած

Լևոն Թադևոսյանը (**Պապաշա**) և նրա կնոջ եղբայրը՝ **Ստեփան Տեր-Մկրտչյանը** (**Գագիկ**), որը հետագայում դարձավ ՀՅԴ Զինական ֆոնդի (Զիֆոն) ղեկավարը:

Հրապարակվող վավերագրերի **առաջին մասը** ներառում է Ռուսաստանի Ոստիկանության դեպարտամենտի պաշտոնյաների զեկույցները, հաշվետվությունները, տեղեկագրերը և ՀՅ Դաշնակցության մի շարք հայտնի գործիչների գրությունների ու նամակների թարգմանությունները, որոնք առգրավվել են խուզարկությունների ժամանակ: Վավերագրերի **երկրորդ մասը** ներառելու է Ոստիկանության դեպարտամենտի ներկայացրած նյութերի հիման վրա Արդարադատության նախարարությունում սկիզբ առած դատական քննությանն առնչվող փաստաթղթերը:

Մկրտիչ Դ. Դանիելյան
Պատմ. գիտ. թեկնածու

Մկրտիչ Դ. Դանիելյան – զբաղվում է 1870-1880-ական թթ. նարոդնիկական շարժման, հայ ազգային նարոդնիկության և ազգային կուսակցությունների պատմության հիմնահարցերով:

Էլ. հասցե՝ m.danielyan@mail.ru

Թիվ 1

Գաղտնի
11 նոյեմբերի

Նորին գերազանցություն արդարադատության նախարարին
Նորին գերազանցության ընդունարան

Թիֆլիսի դատական պալատի դատախազի
պաշտոնակատարից

Զեկույց

Պատիվ ունեմ ներկայացնելու Ձերդ գերազանցությանը Բաքվի նահանգային ժանդարմական վարչության հոկտեմբերի 26-ի որոշման պատճենը՝ համաձայն 10353-րդ և մյուս հոդվածների հետա-

քննություն սկսելու Ներսես Դավթյանցի, Սողոմոն Հովակիմյանցի և Հովսեփ Կիրակոսովի՝ գաղտնի կազմակերպությանը պատկանելու մեղադրանքի առնչությամբ, որը նպատակ ուներ ապստամբություն հրահրելու հայերի շրջանում Թուրքիայում, նրա հոկտեմբերի 28-ի գրության պատճենը՝ այս գործով որպես մեղադրյալ հետաքննության մեջ ընդգրկելու Քրիստափոր Միքայելյանին և բժիշկ Միքայել Զալյանցին (նույն ինքը Զալիևն է), և առաջին որոշման մեջ հիշատակված երկու նամակների թարգմանությունները, որոնք առգրավվել էին խուզարկության ժամանակ. մեկը՝ Կիրակոսովից, իսկ մյուսը՝ Հովակիմյանից: Ընդ որում, հարգանքով զեկուցում ենք, որ կապ ունեցող այլ անձնավորությունների, ինչպես նաև կազմակերպությունների ու գաղտնի ընկերության գործունեությունը հաջողությամբ բացահայտելու համար նպատակահարմար եմ գտնում մեղադրյալներ Դավթյանցին, Հովակիմյանցին, Կիրակոսովին, Միքայելյանցին և Զալյանցին պահել կալանքի տակ մինչև գործի ուսումնասիրությունը և համապատասխան բացահայտումը: Դրան զուգահեռ, համաձայն քրեական օրենսգրքի 10351-րդ հոդվածի, այդ մասին հաղորդել եմ Ժանդարմական վարչության պետին և խնդրել հայտնել նրան նշված երկու նամակների ավելի ստույգ և ճշգրիտ թարգմանության անհրաժեշտության մասին:

Թիֆլիսի դատական պալատի դատախազի պաշտոնակատար (ստորագրությունն անընթեռնելի է)

№ 502
2 նոյեմբերի 1895 թ.[1]

Թիվ 2

Ընկերնե՛ր,
Չորրորդ օրն է՝ ես արդեն մեկնել եմ:

Արաքսի ափին փոքր-ինչ ուշացանք, բայց այդ ուշացումն էժան չնստեց: Բոլոր գործիքները և պաշարը բարեհաջող ստացել ենք

1 Ռուսաստանի Դաշնության պետական արխիվ (ГАРФ), ֆ. 102, 3-րդ գործավարություն, 1895 թ., գ. 79, թ. 7:

երեկ, վարձ չվերցրին, բայց այլ ձևով կոպեկներ ստացան: Պետք է վճարեինք 60 ռուբլի, բայց Պարսկաստանում մեր կոնսուլը գրություն տվեց, որպեսզի մեզնից ոչինչ չվերցնեն: Պ..ն արդեն ուղարկված է: Խմբաքանակի մի մասն այստեղ կմնա նախապատրաստելու համար: Այս ձմեռ մեզ մոտ ոչ ոք չի լինի. կմնան տարբեր վայրերում: Այն գործը, որն այստեղ դարձավ վիճելի, իզուր խոսակցություններ առաջ բերեց, («Վասպուրական» բառը՝ հարաբերական) ինքնին արժե, որ կարգավորվի: Դրա համար մեծ ջանքեր է գործադրում Պետոն[2], բայց նա խմբաքանակի հետ Շատախում է: Ապրանքի մի մասը ստացվել է: Դուք նամակի մի՛ սպասեք, չվնասված-ների մի մասն առայժմ չուղարկել, այլ ուղարկել երկու հատվածներով. դա հաճախ եմ կիրառել:

Խնդրում ենք մեկ անգամ գրել, որպեսզի չմոռանաք փող ուղարկել, եթե գտնում եք, որ այս ամենը հայտնի է: Արհեստանոցի բանվորները նույնպես երկար ժամանակով են մնալու, մարդիկ չեն ավելանալու: Այդ պատճառով էլ ես թողեցի տեղի վարպետներին, բայց ինչքան լավ ես աշխատում, այնքան հարկավոր է փող վճարել: Բայց մենք այդպես չենք մտածում, քանի որ նվերները հաճախակի կլինեն, ուստի կարելի է ինքդ քեզ բավարարել:

Արամն Էրիվան է ուղարկել 13-ական 70 տեսակի գրություն, որպեսզի Ձեզ նույնպես հասնի: Այս համարները ստացել են ռուսական Ջուլֆայում՝ Գերմանցու հասցեով՝ սխալմամբ վերցնելով ռուսական կողմում:

Այդտեղից փող ստանալուց հետո ես մեկին հարցրի, թե ինչ թերթեր են: Նա պատասխանեց, որ իրեն հանձնարարել են վերցնել, և ինքը վերցրել է: Ես նույնպես այնտեղ էի, ինձ նույնպես տվեցին, ասացին, որ գրեմ, եթե ուղարկում են բանդերոլ, դնեմ ծրարի մեջ. ոչ ոք իրավունք չունի հարցնելու, թե դա ինչ է:

Այստեղ ռուսական կոնսուլը հետևում է մեզ. միայն դա էր պակաս, մենք հաճախ ենք դրսի հետ կապ հաստատում: Բոլոր ռուսահպատակներից ստորագրություն են վերցրել, որ ոչ մեկն իրավունք չունի զենք վերցնելու և վաճառելու, բայց դա մեզ չի վերաբերում. մենք չենք գնում և չենք վաճառում, բայց պատրաստում ենք և վերաբնակվում:

---

2 **Պետո** (Ալեքսանդր Պետրոսյան) – ՀՅԴ առաջին գործիչը Վասպուրականում:

Այդ գործը կոնսուլի պարտադրված պարտականությունն է. դա արվել է թուրքական կոնսուլի պահանջով: Մեր խմբաքանակը դեռևս կոմպլեկտավորված չէ, առայժմ սրանք են:

Փող ուղարկե՛ք, Հովսեփը նույնպես սպասում է:

Անհայտ[3]

Համապատասխանում է բնօրինակին:

Վարչության համհարզ

Պորուչիկ (ստորագրությունն անընթեռնելի է)[4]

Թիվ 3

Նամակի պատճեն, որ առգրավվել է Սամսոն Հովակիմյանից այս տարվա հոկտեմբերի 19-ին՝ խուզարկության ժամանակ, գրված հայերեն, կրկնակի շեշտված ազգանունով: Կնիքն է՝ «փոստատար վագոն, 18 հոկտեմբերի 1896 թ.»:

Թանկագի՛նս,

Այս նամակը ստանալուց հետո աշխատեք որևէ կերպ տեղեկացնել պարոն Հրաշալիին[5], որ այն երիտասարդը, որի անունը նշել էր նամակում, երեկ պատահաբար ձերբակալվել է: Ինչ վերաբերում է Պարսկաստանից Ձեր նամակին, որպեսզի ըստ հասցեի չուղարկեք, տվե՛ք նրա թեյավճարը:

Քիչ ժամանակ է անցել: Խնդրում եմ հաղորդել բժիշկ Ջալիևին, որ Թամարա և Դավիթ Ներսեսովների զավակ Լևոնիկն այս տարի ընդունվել է ռեալական ուսումնարան (II դասարան), բայց նրան անհրաժեշտ են միջոցներ՝ ինչպես սովորելու, այնպես էլ աշակերտական հագուստ ձեռք բերելու համար: Թամարայի ծնողներն իրենք անելանելի դրության մեջ են, և խեղճ որբուկին պետք է իր հանգուցյալ ծնողների ազգականներն օգնեն: Այնտեղ, թվում է, Թամարայի և Դավիթի ազգականներից շատերը կան, և, դա նկատի ունենալով, խնդրում եմ հաղորդել բժշկին, որ սկզբի համար որևէ բան անի: Կարիքների համար 60 ռուբլին բավարար չէ: Ես

3 Թարգմանական սխալ է. Սևքարեցի Սաքոյի **Անմեղ** ծածկանունը թարգմանվել է **Անհայտ**:

4 Նույն տեղում, թ. 8:

5 Պարոն Հրաշալին Ներսես Դավթյանն է:

սպասում եմ այդտեղից: Թող Ալեքսանդրը շտապ, շատ շտապ օգնի խեղճ, բայց բոլոր կողմերից թանկագին և ընդունակ որբին: Նորից եմ կրկնում այս առնչությամբ՝ անհրաժեշտ է ձգտել նրան սովորելու հնարավորություն տալու: Վերջին ժամկետը վաղն է:

Ձեր Ք. Ռուբենյան[6]

(ստորագրությունն անընթեռնելի է)[7]

Թիվ 4

Պատճեն

Արձանագրություն

1895 թ. հոկտեմբերի 28-ին Բաքու քաղաքում ես՝ Բաքվի նահանգային ժանդարմական վարչության պետ գնդապետ ֆոն Ֆրանկս, ուսումնասիրելով Թիֆլիս քաղաքում խուզարկության ժամանակ Քրիստափոր Միքայելյանից առգրավված ռուսերեն գրագրությունը (հայերեն դեռևս չի թարգմանվել) և նրա այսօրվա ցուցմունքները, գտնում եմ, որ.

1. նրա հետ ապրող Եվգենյա Կոնստանտինովնա Լավրուսևիչը իր անբարեհուսությամբ հայտնի անձնավորություն է,

2. Լավրուսևիչի հետ անցած ամառվա ընթացքում նրա գրագրությունը պայմանական բնույթ ունի, ինչը հաստատվում է նշված անունների վերաբերյալ բացատրություն տալուց նրա հրաժարումով, իսկ նամակներում նշված հանգամանքները համապատասխանում են մեր ունեցած գաղտնի տեղեկություններին:

3. Արտասահմանից ստացված չորս նամակներ՝ հասցեագրված իրեն և Լավրուսևիչին Փարիզից «23 մայիսի և 30 հունիսի, Սաշա» ստորագրությամբ, Վիեննայից «18 հուլիսի, Լևին Ուտյա» ստորագրությամբ, որոնց հեղինակներին հրաժարվեց նշել, և հայերենը՝ Թավրիզից «Սարգիս Հովակիմյան» ստորագրությամբ:

4. Թիֆլիսից երեք նամակ՝ «Կոջոր, 27, 11, 30», իր ստորագրությամբ, և մեկը՝ «Իշխան» ստորագրությամբ, որոնց տարօրինակ բովանդակության վերաբերյալ տվեց խուսափողական պատասխան:

---

6 **Ք. Ռուբենյան**-ը Քր. Միքայելյանի ծածկանունն է:
7 Նույն տեղում, թ. 9:

5. Խոստովանեց, որ հոկտեմբերի 18-ին Հովակիմյանցից առգրավված նամակն ինքն է գրել, բայց հրաժարվեց ներկայացնել բովանդակությունը, ինչպես նաև այն ձերբակալված անձնավորությանը, որի մասին հաղորդվել էր:

6. Ինչ վերաբերում է նամակի երկրորդ մասին, նշեց, որ Զալիևին չի ճանաչում և չի տեսել. հասցեագրելով նամակը Հովակիմյանցին, որի բովանդակությունը վերաբերում է երրորդ անձնավորությանը, դիմել էր նրան այդ երրորդ անձի միջոցով, որը լավ գիտեր Զալիևին և դիմել էր այդ անձնավորությանը, որին և չէր կարող հասցեագրված լինել նամակը:

7. Խոստովանեց իր ծանոթությունը, գրագրությունը և գումար ստանալը Ներսես Դավթյանից, որին տեսել էր վերջին օրերին Թիֆլիսում:

8. Նշեց, որ Բաքվում գտնվող սակավաթիվ ծանոթներից հաճախակի հեռագրական կապի մեջ է երկուսի հետ, որոնց ազգանունները հրաժարվեց տալ:

Նշված տվյալները, անկասկած, վկայում են հայկական ագիտացիոն գործունեությանը նրա ակտիվ մասնակցության և Դավթյանցի ու Զալիևի հետ նրա կապերի մասին, որոնք հավանաբար այն նույն անձնավորություններն են Բաքվում, որոնց հետ հաճախակի հեռագրական կապի մեջ է[8]:

1) Զալիևից առգրավված այցեքարտերի հայերեն գրությունների թարգմանությունից պարզվել է.

ա) Ներսես Դավթյանցի երեք այցեքարտերում, որի անուն-ազգանունը հայերեն տպագրված է անկյունում, շարադրված է. «18 հոկտեմբերի 1894 թ., Պ. Զալյանցին: Այս գրության գրաբերին խնդրում ենք տալ Պարոնյանցի նամակը, որը հանձնել է Ձեզ Արամյանը: Եթե հարմար է, ներկայացրե՛ք Ձեր կարծիքը՝ պարոնին փոխանցելու համար:

Մեր խորհրդակցությունը հետաձգվում է, հետաձգվում է նաև տեղեկությունների դուրսգրման գործը. այդպես լավ չէ, անհրաժեշտ է որևէ որոշում ընդունել և պատասխանել:

Հարգանքով՝ Ն. Դավթյանց»:

8 Նույն տեղում, թ. 10:

բ) «3 դեկտեմբերի 1894 թ.: Պ. Ջալիևն այսօր՝ ժամը 1–4–ը, կլինի Ձեզ մոտ՝ Թիֆլիսում՝ կապված գործերի ստուգման կարգի թուլացող պատկերացումների հետ: Նույն օրը՝ երեկոյան, մարդիկ կլինեն Արամյանի մոտ: Կատանյանցը դեռևս տեղյակ չէ, եթե հնարավոր է, տեղեկացրե՛ք նրան:

Լայն խոսակցություն գործի մասին նրանց չպետք է ներկայացնել: Ուղարկե՛ք կամ առաջարկե՛ք մարդկանց, որ այսուհետ մեզ վրա հույս չդնեն, և իրենք դատեն՝ ինչպես պետք է վարվել:

Ձեր Ն. Դավթյանց»:

գ) «11 մարտի 1895 թ.: Հարգելի՛ բժիշկ, տվե՛ք իրենը: Այն երիտասարդի հետ, որի մասին մենք խոսում էինք, այժմ անհրաժեշտ է խոսել: Ես զբաղված եմ, կես ժամից կգամ:

Հարգանքով՝ Ն. Դավթյանց»:

2) Կարա–Մուրզայի երկու հայերեն այցեքարտերի վրա գրված է. «Մեծարգո՛ բժիշկ Միխայիլ Հովսեփովիչ, երեկ Տեր–Վաչյանին գրեցի նամակ, որպեսզի Ձեզ ուղարկի հաշվից մնացած գումարը (184–зу1/5), և դա նշանակում է դրոշմանիշի համար: Երեկոյան կգամ: Կարա–Մուրզա, 14.III.95 թ.»:

«Խնդրում եմ սեմինարիայից եկած պ. Մուրադյանին քննել. նա Ձեր խորհրդի կարիքն է զգում:

Ձեր Կարա–Մուրզա

25.IV.95 թ.»:

3) Միհրան Իվանի Տիգրանյանի ռուսերեն այցեքարտի վրա. «Հարգարժա՛ն բժիշկ, այս ամենի հետ ընդունեք այդ կտորը:

Ձեր Միհրան»[9]:

4) Այցեքարտի վրա, որն օգտագործվել է փոստային թղթի փոխարեն, առանց ստորագրության հրավեր է.

«Խնդրում եմ ներկա լինել համերգին, որը տեղի կունենա Մադամի տանը՝ Սարկիսովի մոտ՝ Մեմոնտինկում, դեկտեմբերի 26–ին՝ երեկոյան ժամը 7–ին: Մուտքի վճարը նույնն է»:

---

9 Նույն տեղում, թ. 11:

Հակառակ կողմում մատիտով՝ 45
380
250

5) Բոգդան Կոտկոտև Կիզլյար.

«Սիրելի՛ Միքայել, այսօր՝ մայիսի 16-ին՝ ժամը երեկոյան 8-ին, հրավիրեցի ներկայացուցիչների՝ կաթողիկոսին դիմավորելու համար: Թեյին ներկա կլինեն Աբելյանը, դու և Ղուկասյանը, անպայման արի՛, փոքր-ինչ հուզված եմ»: «Կլինեն» բառից հետո գրված է կարմիր թանաքով:

6) Այցեքարտային գրություն. «Այսօր՝ հոկտեմբերի 29-ին՝ 7 ½-ին, նշանակված է հասարակական բարեգործական հավաք: Աշխատի՛ր անպայման ներկա լինել:

Պ. Մարգարյանց»:

Վերը նշվածը կապված է Ասխաբադի պրիստավի օգնական Միոնսարովի հոկտեմբերի 23-ի N 1193 զեկուցման բովանդակության հետ, որում հիշատակված՝ «Ներսես» ստորագրությամբ (պարզվում է Բոգատիրովը) Բաքու՝ Շիրազովին հասցեագրված հեռագրում նշված ձերբակալվածների մեջ էր Զալյանցը, ինչը վկայում է, որ Զալյանցը ոչ միայն ակտիվորեն մասնակցում է հայկական ազգային շարժմանը, այլև աչքի ընկնող անձնավորություն է, եթե ոչ նախագահը Բաքվի ագիտացիոն կոմիտեում, ինչը հավանական է: Բացի այդ՝ Մ. Զալյանցից առգրավվել է բրոշյուր, որը սկսվում է թարգմանչի՝ նախաբանում ներկայացված խոսքերով, այն է. «Պատմական հսկայական կարևորության իրադարձությունը ցնցել է Ռուսաստանը: Կայսր Ալեքսանդր II-ը դատապարտվել էր մահվան և մահապատժի ենթարկվեց հեղափոխականների կողմից»: Սյուներին ամրացված «Նարոդնայա վոլյա»-ի թռուցիկներում և հեղափոխականների դեմ դատական գործընթացում մեկ անգամ ևս բացատրվեց և մանրակրկիտ ուսումնասիրությունից պարզվեց, որ շատ տողեր ընդգծված են կապույտ և սև մատիտներով՝ ցույց տալով ընտրված հատվածները, որոնք կարող են նյութեր տալ աքսորի համար, և II գլխի, որ վերնագրված է «Ագիտացիայի միջոցները», 22-րդ և 23-րդ

տողերի միջև մատիտով նշված է հայերեն ձեռագիր տեքստ, որը հավանաբար ընտրված հոդվածի վերաբերյալ արձագանքն է, իսկ 128-րդ էջում մատիտով արված է ինչ-որ հայերեն գրառում:

Ընդունելով, որ վերը նշված տվյալները բավարար են բացահայտելու նշված անձանց՝ հայկական ազգային շարժման հետ կապված ընկերությանը պատկանելու մեղադրանքը, որը նախատեսված է քրեական օրենսգրքի 320-րդ հոդվածով, իսկ Զալիևը բացահայտվել է նաև հանցագործության մեջ, որ նախատեսված է քրեական օրենսգրքի 252-րդ հոդվածով, որոշեցի. 1. Քրիստափոր Միքայելյանին և բժիշկ Միքայել Զալյանցին (նույն ինքը Զալիևն է) որպես մեղադրյալ ընդգրկել հետաքննության մեջ, որն իրականացվում է ինձ վստահված վարչությունում քրեական օրենսգրքի 1035-րդ հոդվածի կարգով, 2. այս որոշման պատճենը ներկայացնել Թիֆլիսի դատական պալատի պ. դատախազին՝ խնդրելով ըստ քրեական օրենսգրքի 1035-րդ հոդվածի նշված մեղադրյալներին պահել Բաքվի բանտային ամրոցում:

Բաքվի նահանգային ժանդարմական վարչության պետ,
գնդապետ ֆոն Ֆրանկ

Համապատասխանում է բնօրինակին:

Վարչության համհարզ, պորուչիկ Ստոբլին-Կամենսկի

Թիֆլիսի դատական պալատի դատախազի քարտուղար (ստորագրությունն անընթեռնելի է)[10]

Թիվ 5

Պատճեն

Որոշում

26 հոկտեմբերի 1895 թ., ք. Բաքու

Բաքվի նահանգային ժանդարմական վարչության պետ, գնդապետ ֆոն Ֆրանկս իմ ունեցած ոչ հրապարակային տեղեկությունների հիման վրա, ըստ որոնց՝ Բաքվում բնակվող, Ա. Շուբերտի գրասենյակում ծառայող Սամսոն Հովակիմյանցը և գրասենյակի հաշվապահ Ա. Ի. Ադամովան, Ներսես Դավթյանցը և Թիֆլիս քաղա-

10 Նույն տեղում, թթ. 12-13:

քում բնակվող, «Կավկազ» թերթի խմբագրության աշխատակից Իոսիֆ Կիրակոսովը անդամակցում են հայկական գաղտնի ընկերության, որը նպատակ ունի ապստամբություն հրահրելու Թուրքական կայսրության կառավարության դեմ, և այդ անդամակցությունն արտահայտվում է նրանով, որ նշված անձանց միջոցով է իրականացվում փողի և զենքի հայթայթման, Թուրքիա հասցնելու մասին գրագրությունը, համապատասխան կարգով իրականացրի նշված երեք անձանց խուզարկությունը, ընդ որում առգրավվեց մեծածավալ գրագրություն, մեծ մասը՝ հայերեն, մի մասը՝ ռուսերեն: Հայերեն գրությունները դեռևս չեն թարգմանվել, բայց թարգմանվածների մեջ էին՝

I. Կիրակոսովից առգրավված նամակը՝ «Բաքու 12–Թիֆլիս» շտեմպելով, որի մեջ դրված էր մեկ այլ ծրար՝ «խնդրում եմ փոխանցել Քրիստափորին» հայերեն գրությամբ, որի մեջ դրված էր մեկ այլ հայերեն նամակ, որը հաստատում է մեր ունեցած տեղեկությունները, 2) այդպիսի մի ծրար՝ բարդ ձեռագրով, «Բաքու–Թիֆլիս, 25 հոկտեմբերի 1895 թ.» շտեմպելով, 3) նրա անունով նամակ Թավրիզից՝ «Թիֆլիս–Թավրիզ, 16 հոկտեմբերի 1895 թ.», որում ցուցում էր տրվում, թե ինչը և ինչպես պետք է ուղարկվի ու երբ, և ինչ է ստացված ու ինչ ճանապարհով:

Ս. Հովակիմյանից առգրավվել է Թիֆլիսից հոկտեմբերի 18-ին գրված նամակ՝ «փոստատար վագոն 18» շտեմպելով, որում հաղորդում էին պարսկական նամակի առգրավման հետևանքով Կիրակոսովի ձերբակալության մասին և խնդրում տեղեկացնել այդ հասցեով գրագրությունը դադարեցնելու մասին: Այնուհետև խնդրում էին շտապ հաղորդել բժիշկ Զալիևին ինչ-որ բան, որն անկասկած տրված էր պայմանական ծածկագրով:

II. Փոստային մեծ ծավալի շրջանակով թղթի վրա մատիտով պատկերված են տարբեր զենքեր, ինչպես, օրինակ, սուսեր, հրացան, ալեբարդ և այլն, այնուհետև առկա է թանաքով ձեռագիր գրություն, որը զբաղեցնում է բոլոր չորս էջերը:

Ն. Դավթյանցից առգրավվել են՝ 1) մեծ քանակությամբ փոստային չեկեր տարբեր անձանց և տարբեր քաղաքներ ու արտասահման փող ուղարկելու վերաբերյալ, 2) գրագրության համար անհրաժեշտ նյութերի չափազանց մեծ պաշար, հատկապես գորշ և դեղին գույնի

ծրարներ և ընդհանրապես տարբեր չափերի քարտեր՝ անկյունում հայերեն ստորագրությամբ, 3) 900 ռուբլի կանխիկ գումար:

Ներսես Դավթյանցին հարցաքննելու ժամանակ պարզվեց, որ Կիրակոսովի մոտ հայտնաբերված և առգրավված նամակը՝ «Բաքու 12-Թիֆլիս» շտեմպելով, գրել է Դավթյանցը:

Նկատի ունենալով, որ այս նամակների բովանդակությունը բացահայտ ցույց է տալիս փողի և զենքի տեղափոխումը Թուրքիա, իսկ այդ նամակների գրման և փոխանցման մեջ Դավթյանցի, Հովակիմյանցի և Կիրակոսովի մասնակցությունը վկայում է նշված անձանց՝ հայկական գաղտնի ընկերությանը պատկանելության մասին, որոշեցի.

1) ըստ քրեական օրենսգրքի 1035-րդ հոդվածի՝ իրականացնել հետաքննություն՝ Ներսես Դավթյանցի, Սամսոն Հովակիմյանցի և Իոսիֆ Կիրակոսովի դեմ հանցագործության մեղադրանքով, որը համապատասխանում է քրեական օրենսգրքի 320-րդ հոդվածին,

2) համաձայն քրեական օրենսգրքի 1035-րդ հոդվածի՝ հանձնարարել Թիֆլիսի դատական պալատի դատախազին նշված անձանց պահել Բաքվի բանտային ամրոցում,

3) այս հետաքննության իրականացումը հանձնարարել վարչության համիարզ, պորուչիկ Ստոբլին-Կամենսկուն,

4) խնդրել պալատի դատախազին նշանակել դատախազի հատուկ տեղակալ՝ մշտապես հսկելու հետաքննության իրականացման ընթացքը:

Ճիշտ է (ստորագրություն)

Բաքվի նահանգային ժանդարմական վարչության պետ, գնդապետ ֆոն Ֆրանկ

Թիֆլիսի դատական պալատի դատախազի քարտուղար (ստորագրությունն անընթեռնելի է)[11]

11 Նույն տեղում, թ. 14:

Summary

CHRISTAPOR MIKAELIAN AND THE ARF ORGANIZATION OF BAKU

The secret readings of the Police Department of Tsarist Russia in the 1890s

Mkrtich D. Danielyan
Candidate of Sciences in History

Key words – Christapor Mikaelian, the ARF organization of Baku or “Voskanapat”, police department, secret readings, Nerses Davtyan (Hrashali), Mikael Zalyan (Doctor Zaliev), Levon Tadevosyan (Papasha), Stephan Ter-Mkrtchyan (Gagik).

In the Ottoman Empire parallel to the Armenian massacres that began in the fall of 1985, the persecution of Armenian politicians by the Police Department of Tsarist Russia began in Transcaucasia. The Tsarist government thought that the idea of restoring national statehood among Armenians was very viable, so they considered the possible rebellion of Western Armenians against the Ottoman Empire as a dangerous example for Eastern Armenians. Therefore, in order to prevent the possible financial support to the Armenian national liberation movement, the Tsarist government first of all directed its attack directly to the ARF Central Committee of Baku or "Oskanapat" led by Christapor Mikaelian, in which Nerses Davtyan (Hrashali), Mikael Zalyan (Dr. Zaliev), Nerses Abelyan, Levon Tadevosyan (Papasha), Stephan Ter-Mkrtchyan (Gagik) played a major role, the latter later became the head of the military fund of ARF (Zinphon).

In such a situation, ARF and its leaders, in particular Christapor Mikaelian, were able to disguise their activities under the guise of various humanitarian and charitable initiatives. In this way they organized fund-raising and other initiatives in order to support the Western Armenians. However, these initiatives caught the attention of the Police Department, and many prominent figures, including Cr. Mikaelian, were arrested.

The presented documents include not only reports and bulletins of the officials of the Police Department, but also the translations of the writings and letters of a number of famous figures of the Federation, which were confiscated by the Tsarist policemen during the searches, but due to the lack of knowledge of the Armenian language and the lack of necessary information about these figures, were partially distorted and were warped by the translators.

Վէմ համահայկական հանդես, ԾԳ (ԽԱ) տարի, թիվ 4 (84), հոկտեմբեր-դեկտեմբեր, 2023

The first part of the documents that are being published includes the reports and bulletins of the officials of the Russian Police Department and the translations of the writings and letters of a number prominent ARF figures, which were seized during the searches.

The second part of the documents will include the documents related to the judicial investigation initiated by the Ministry of Justice based on the materials submitted by the Police Department.

Резюме

ХРИСТОФОР МИКАЕЛЯН И БАКИНСКАЯ ОРГАНИЗАЦИЯ АРФ ДАШНАКЦУТЮН

В секретных чтениях Департамента полиции царской России 1890-х гг.

Мкртич Д. Даниелян
Кандидат ист. наук

Ключевые слова – Христофор Микаелян, Бакинская организация АРФД или «Восканапат», Департамент полиции, секретные чтения, Нерсес Давтян («Чудесный»), Микаел Залян («доктор Залиев»), Левон Тадевосян («Папаша»), Степан Тер-Мкртчян («Гагик»).

Параллельно с начавшейся осенью 1895 г. в Османской империи резней армян в Закавказье начались преследования армянских политических деятелей со стороны Департамента полиции царской России. Царское правительство считало, что идея восстановления национальной государственности среди армян весьма жизнеспособна, и возможное восстание западных армян против Османской империи считало опасным прецедентом для восточных армян. Для того чтобы прекратить финансовую поддержку армянского национально-освободительного движения, правительство Российской империи в первую очередь направило удар непосредственно на тесно связанный с Христофором Микаеляном центральный комитет АРФ Дашнакцутюн в Баку (партийный псевдоним-«Восканапат»), в которой ключевые позиции занимали Нерсес Давтян («Чудесный»), Микаел Залян («доктор Залиев»), Нерсес Абелян, Левон Тадевосян («Папаша»), Степан Тер-Мкртчян («Гагик»). Последний впоследствии возглавил Военный фонд (Зифон) АРФ Дашнакцутюн.

В такой ситуации АРФ Дашнакцутюн и его руководители, в частности Хр. Микаелян, смогли замаскировать свою деятельность под видом различных гуманитарных и благотворительных инициатив. Таким образом, в Баку осуществлялся сбор средств и предпринимались различные шаги для поддержки западных армян. Однако это не ускользнуло от внимания Департамента полиции царской России, и осенью 1895 г. были арестованы многие видные деятели, в том числе и Хр. Микаелян.

Представленные в данной статье документы включают в себя не только рапорты, отчеты, ведомости чиновников Департамента полиции, но и переводы отдельных писем ряда известных деятелей АРФД, которые были конфискованы царскими полицейскими при обысках, но из-за плохого владения армянским языком и отсутствия необходимых сведений, были частично искажены.

Первая часть публикуемых документов включает отчеты чиновников Департамента полиции России, их рапорты и переводы писем ряда известных деятелей АРФ Дашнакцутюн, изъятых в ходе обысков.

Во вторую часть войдут документы, связанные с судебным расследованием, инициированным Министерством юстиции царской России, на основании материалов, представленных Департаментом полиции.

REFERENCE

1. Ṛusastani Dashnut‘yan petakan arkhiv (GARF), f. 102, g. 3, 1895 t‘., g. 79, t‘t‘. 7-14 (**In Russian**).